



ԿԼԱՍԻԿՆԵՐԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱԶԵ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏՅՐԱՏ

894.631

1269

2-35

2m/2m/2m/2m, h.

Prüfungsausschuss

In

9/2

723

Վրացական գրականություն

ԻԼԻԱ. ՃԱՎՃԱՎԱԶԵ

(1837—1907)

33

Գ Ե Տ Ն Բ Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ. ԿԻՑ ՄԱՆԿ. ՊԱՏԱՆԵՎԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԻԼԻՍ. ՃՍՎ.ՃՍՎ.Ա.ՁԵ

894.631 - 93

Ս - 36


ՄԱՐՏ 1961

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրացերենից թարգմանից

ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

1269
A $\frac{\text{II}}{32097}$



Խմբագիր՝ ՎԵՍՊԵՐ

Տեխ. խմբագիր՝ Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎՐԱՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Տասնիններորդ դարի վրաց խոշորագույն գրող և հասարակական գործիչ Իլիա Ճավճավաձեն հանդիսանում և վրաց նոր գեղարվեստական գրականության հիմնադիրը և նոր գրական լեզվի ստեղծողը: Ճավճավաձեն, լինելով ազգային ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչը, վոր աճել և վաթսուներկան թվականների ուսական հեղափոխական-գեմոկրատիկ գրականության ազդեցության տակ, հանդես յեկավ վորպես ինքնակալության և ֆեոդալիզմի դեմ պայքարող բոցավառ մարտիկ:

Այն չորս տարվա ընթացքում, վորն անցկացրեց Իլիա Ճավճավաձեն Պետերբուրգի համալսարանում, նա ծանոթացավ ուսական հեղափոխական գեմոկրատներ՝ Բելինսկու, Չերնիշևսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի գաղափարներին: Այդտեղ ամրապնդվեց նրա ատելությունը դեպի միապետական հասարակակարգը, ձեռնակերպվեցին նրա հայացքները գրականության ու արվեստի նկատմամբ:

Վաթսուներկան թվականներին Վրաստանում իշխում էր սանձարձակ ճորտատիրությունը: Մի կողմից զարգութացնող սատրապների ձեռքով, և մյուս կողմից վրաց կալվածատերերի ձեռքով ճնշվող աշխատավոր գյուղացիությունը պատասխանում էր տարերային ապստամբություններով: Գյուղացիական շատ ապստամբություններ ճնշելուց հետո, Շամիլի դեմ մղվող յերկարատեղ ու դաժան պատերազմը վերջացնելուց հետո, ուսական ինքնակալությունն ամրացրեց իր տիրապետությունը նվաճված Կովկասում: Հենվելով Վրաստանի ռեակցիոն ազնվականության վրա, նա ձգտում էր վերջնականապես վոչնչացնել վրաց ժողովրդի ինքնուրույն գոյությունը, խլել նրանից նրա կուլտուրան, մայրենի լեզուն և բունի կերպով ուսացնել նրան:

Իլիա Ճավճավաձեյի խումբը գլխավորեց ինքնակալության և ճորտատիրության դեմ ուղղված ազգային ազատագրական շարժումը:

Իլիա Ճավճավաձեյի գեղարվեստական յերկերը՝ նրա քնարերգութունը, պոեմներն ու արձակը, նոր ուղղութիւնն տվին բազմազարյան տրագիցիաներով հարուստ վրացական գրականութեանը: Նրանք կազմեցին նոր գրական լեզվի հիմքը:

Իլիա Ճավճավաձեն վերադառնալով Ռուսաստանից, առաջին իսկ տարիներից մինչև 19-րդ դարի վերջերը գլխավորելով վրաց մամուլը, ստեղծեց մի շարք թերթեր և ժուռնալներ:

Ճավճավաձեն հանդես եր գալիս վոչ միայն վորպես խոսքի գեղարվեստագետ, այլև վորպես հրապարակախոս: Մրամիտ և տաք պոլեմիստ լինելով, նա անողոք եր իր գաղափարական հակառակորդների հանդեպ: Նա իր հրապարակախոսական գեղեցիկ սուր ծայրն ուղղել եր ռուսական ինքնակալութեան դուրբողներին՝ Կատկովների և Յանովսկիների դեմ:

Ճավճավաձեն վրաց գրականագիտութեան և արվեստագիտութեան հիմնադիրն է: Նա հրաշալի հոգեվածներ է նվիրել 19-րդ դարի առաջին կեսի վրաց գրականութեանը, զարգացնելով նրանց մեջ ռեալիստական ուղղութեան ծրագիրը:

Նա գրական ու թատերական քննադատ է, Պուշկինի, Շեքսպիրի, Հայնեյի թարգմանիչը, բանասեր ու մանկավարժ, պատմաբան ու տնտեսագետ, Ֆինանսների ու հողային հարցի, ներքին ու արտաքին քաղաքականութեան գիտակ:

Ճավճավաձեյի ամբողջ ստեղծագործական ու հասարակական-քաղաքական գործունեությունը հիմնական գաղափարներից մեկն եր՝ պայքար ռուսական ինքնակալութեան հալածակիչ գաղութային քաղաքականութեան դեմ: Նա, իր ղեկավարած յերիտասարդ գրական սերնդի հետ, կատաղի պայքար ծավալեց ճորտատիրական կարգերի դեմ, այն ժամանակ իշխող ֆեոդալական արխայիստիկայի դեմ:

Ճավճավաձեն իր ստեղծագործություններում տվեց իր ժամանակակից վրաստանի պատկերը: Նա ռեալիստ գեղարվեստագետի ու ժող հաղթահարեց իրեն ծնունդ տվող դասակարգի աշխարհայացքի սահմանափակվածութունը:

* * *

Իլիա Ճավճավաձեն 19-րդ դարու վրաց գրականութեան մեջ ստեղծեց ռեալիստական քնարերգութեան տրագիցիան: Նա պոեզիան հագեցրեց մարտական գաղափարներով և հեղափոխական պաթոսով:

Ըստ Ճավճավաձեյի, բանաստեղծի դերը վորոշվում է սոցիալական պայքարի շահերով ու խնդիրներով: Ճավճավաձեն կովի դուրս յեկավ պոեզիայում տիրող «քաղցրահնչունության» դեմ՝ այն գաղափարի դեմ, թե արվեստն ինքնանպատակ է:

Թե իրոք վորքան է հարստացրել Իլիա Ճավճավաձեն վրաց պոեզիան նոր քաղաքական գաղափարներով, թե վորքան ընդարձակել է նրա պոեզիայի թեմատիկ դիապազոնը, ցույց է տալիս նրա «Կոմունայի անկման որը» բանաստեղծությունը: Նրա մեջ Ճավճավաձեն, այն ժամանակվա բանաստեղծներից միակը, արձագանքեց Փարիզի կոմունարներին անձնուրաց պայքարին, վոգեշունչ սողեր նվիրեց նրանց: Բանաստեղծությունը համակված է մեծագույն համակրանքով դեպի կոմունարները: Նա համարձակ ու վճռաբար կանգնում է Ֆրանսիայի բանվոր դասակարգի կողմը:

Բանաստեղծության մեջ հնչում է այն խոր համոզմունքը, թե Փարիզի կոմունայի պարտությունը ուսկցիային միայն ժամանակավոր հաղթանակ կրերի:

«Բաղալիտյան լիճը» հրաշալի վոտանավորը յեղրափակիչ ակորդ հանդիսացավ Ճավճավաձեյի բանաստեղծական ստեղծագործության մեջ: Այդտեղ Վրաստանի վերահաս ազատությունը պատկերված է վորպես մի մանուկ, վորը, ինչպիս ասում է առասպելը, հանգստանում է խորը լճի հատակին՝ վոսկե որորոցում: Բանաստեղծը կոչ է անում գտնել այդ որորոցը և արթնացնել քնած յերեսային:

Իլիա Ճավճավաձեյի պոեմները պետք է դասել 19-րդ դարի վրացական եպոսի լավագույն որինակներին շարքը: Այդ յերկերից ամենավաղ ժամանակվա ստեղծագործությունն է «Ուրվական» պոեմը, վորով յերիտասարդ բանաստեղծն արտահայտել է իր ապագա ստեղծարար գործունեյությունը վոգեվորող հիմնական գաղափարները:

«Ավազակ-կակոն» պոեմը ճորտատիրությունը մերկացնող մի գեղարվեստական փաստաթուղթ է: Պոեմն ամենախորը սիրով է համակված դեպի աշխատավոր գյուղացիությունը: Ինչպիսի լուսապսակով է շրջապատված այդտեղ սոցիալական իրավազրկության դեմ ապստամբած գյուղացու ժողովրդական եպոսի հերոսը դարձած Արսենի պատկերը:

Իլիա Ճավճավաձեյի տված լավագույն ստեղծագործությունների թվին է պատկանում «Մենակյաց» պոեմը (1883 թ.), վոր-

տեղ նա դատապարտում ե կյանքից կտրված մարդու ասկետիկ բիւքնակատարելագործումը»:

Իլիա Ճավճավաձեն իրավամբ համարվում ե վրաց ռեալիստական արձակի նախահայրը: Նրա զարգացման մեջ առանձնապես մեծ ե Ճավճավաձեյի դերը:

Ճավճավաձեյի առնչին պրոգրիկ գործն ե «Անցորդի հուշերը» (1861 թ.): Այդ ստեղծագործութունը հազեցված ե բանաստեղծի անհուն սիրով դեպի իր հայրենիքը, ցարեգմի լծի տակ տնքացող հայրենիքը:

Վոչ Ճավճավաձեյից առաջ, վոչ նրանից հետո, վրաց գրականութունը չի ստեղծել սոցիալական այնպիսի ուժով ե սատիւրիկ սրությամբ համակված ստեղծագործութուններ, ինչպես նրա «Յեկ սա մարդ ե» պատմվածքը: Հեղինակը նրա մեջ նշավակում ե արիստոկրատ դասի բարոյական ե մտավոր այլասերումը:

Ճավճավաձեյի գեղարվեստական արձակի որինակն ե հանդիսանում նաև «Այրի՛ Ոթարովի տնից» պատմվածքը, վորը պետք ե դասել անցյալ դարի վրաց գրականության գլուխ գործոցների շարքը: Այստեղ հեղինակն արտահայտում ե դասերի միջև «կոտրված կամուրջը» վերականգնելու ուսույթիկ—հումանիտար դադափարը: Վրաց գեղջկուհու կյանիկ պատկերով հեղինակը ցույց ե տալիս վրաց դուղացիության բնավորության գլխավոր գծերը՝ նրա աշխատասիրութունը, անշահասիրութունը, ուղղամտութունը, մարդասիրութունը:

Իլիա Ճավճավաձեն սկիզբ ե դնում վրաց նոր գեղարվեստական գրականության: Վրացական արձակի խոշորագույն վարպետները՝ Գևորգի Ծերեթելին, Եղնատե Նինոշվիլին, Դավիդ Կլեխաշվիլին, Ա. Կազբեկը կրել են Ճավճավաձեյի ամենաուժեղ ազդեցութունը: Նրա բանաստեղծական ստեղծագործութունը խոր հետք ե թողել նաև վրաց ռեալիստական հովվերգության զարգացման վրա:

Վրաց ժամանակակից խորհրդային գրականութունը նույնպես յուրացնում ե ժողովրդին մոտիկ ռեալիստ մեծ արվեստագետի ստեղծագործական ամենահարուստ ժառանգութունը:

Խորհրդային ժողովուրդը ցատումով դեն ե գցում վրացական ավերբախականների (Պ. Կիկոձեյի, Բ. Բուաչիձեյի) թեորիան, վորոնք փորձում ենին ժխտել Ճավճավաձեյի ստեղծագործության նշանակութունը մեր սոցիալիստական եպոխայի համար ե դրանով ուզում ենին խորհրդային ժողովրդի ձեռքից

խել այն հզոր գործիքը, ինչպիսին ե անցյալի կուլտուրական
ժառանգությունը քննադատաբար յուրացնելը:

Իլիա Ճավճավաձեն մեզ թողել ե բանաստեղծական անմահ
պատկերներ, վորոնք միշտ ժողովրդականություն կվայելեն խոր-
հըրդային յերկրի ժողովուրդների մեջ, վորովհետև նրանց մեջ գե-
ղարվեստական մեծ ուժով ցույց ե տրված վրաց ժողովրդի պատ-
մության նշանակալից հսկիսաներից մեկը:

Բ. ԺՂԵՆՏԻ

Պ Ո Ե Տ

Յես չեմ յեկել լող յերգելու,
 Վորպես թռչուն մի տարագիր.
 Յերգի համար՝ յերկնից հեռու
 Չեմ առաքված այստեղ — յերկիր:

Նշված եմ յես... Մնում ե ինձ՝
 Յերկնավորիս՝ յերկրի վորդին.
 Ունենալով պատգամ վերից —
 Վարդում եմ յես ժողովրդին:

Մեծ աստըծու բուրվառի վառ
 Հնւրն ե վառվում իմ այս սրտում,
 Վոր յես խալիսի՞ն*) լինեմ յեղբայր, —
 Խինդին՝ ուրախ, վողբին՝ տրտում:

Վերքը նրա՝ վերքըս լինի,
 Այրվի ցավից թող իմ հողին.
 Նրա բախտով, թշվառությամբ
 Թող մորմոքի՞ սիրտըս ուժգին...

Յեզ այն պահին՝ յերկնից մի կայծ
 Թե կըվառի հուրն իմ սրտում,
 Այնժամ կերգեմ, միայն այնժամ —
 Սրբեմ խալիսի լացը տրտում:

23 հուլիսի, 1860 թ.

Պավլովսկի

*) Խալիսի — ժողովուրդ:

* *

Թեկուզ յեզ մեռնեմ, յես չեմ վախենում,
Իմ հետքը, սակայն, թող տեսնեն նրանք,
Ովքեր ինձանից հետո յեն դալու,
Ասեն՝ «կատարեց նա մեծ աշխատանք»:

Յերբ իմ դամբանին լինի լուռ հենված՝
Վըրացին ինձնից շատ ու շատ սիրված,
Ճշմարտապատում իր հողու խորքից՝
Խուլ ձայնով թեկուզ թող կսնչի նա ինձ.

Ննջի՛ր դու խաղաղ, յեզ հանգիստ, յեզ լուռ,
Ապրել ես, ինչպես այդ քեզ եր հարմար,
Խոսքըդ հյուսիսում— մեր յերկրից հեռու՝
Իգուր չե՛ր հնչում սիրով մեզ համար:

19 նոյեմբերի, 1858 թ.

Պետերբուրգ

*
*
*

Նրանից հետո, յերբ քո նկատմամբ յես սեր ըզգացի,
Ջան, իմ հայրենիք, փախալ իմ աչքից յեմ քուն, յեմ դադար,
Քո սրտի զարկին ունկընդրում եմ յես մի սիրով անծիր,
Յեմ որն ե բացվում, ու նորից մթնում այսպես ինձ համար:

Գալիս են, լցվում միշտ համառությամբ խոհեր անհամար,
Ապրումներ անզուսպ յեռում են, վառվում կրկին իմ սրտում.
Յես չեմ արտնջում,—ուրախ եմ նույնիսկ, վոր այսպես ահա
Իմ կյանքը կանցնի քո հոգսով, սիրով, խոհերով անզուր:

Բայց, իմ հայրենիք, յես մի վիշտ ունեմ, յեմ խորունկ, յեմ մեծ,
Ու լույն ե դրել հենց նրա համար իմ սրտում թախիժ,
Յեմ մեկը չկա քո հողի վրա, այսքան խալիսի մեջ,
Վորին վստահեմ յեմ իմ խոհերին անեմ մասնակից...

6 ոգոստոսի, 1864 թ.

Ղվարելի

* * *

Կու, սիրելի իմ գլուխ, ծափ չենք ուզում մենք յերբեք,
Ծառայել ենք սուրբ գործին, նորից նրան ծառայենք,
Ժողովրդի մեջ սփռենք խոսքերը սուրբ, մենք խիզախ,
Վոր հարվածենք չար մարդկանց, տեսնենք նրանց կյանքը՝ մահ:

Յեվ յեթե մարդ չիմացավ, աստված գիտե սիրտը մեր,
Զգտումը մեր սրբազան, իղձերը մեր առավել,
Մեզ իրենց հետ կապեցին՝ բախտն ու կյանքը վերացու,
Թող մեզ ծաղրեն, բայց ջանանք ու տանք բախտին իրացում:

Յեվ պատմում են իմ մասին՝ լեռ ծաղրում ե վերացուն,
Մեր բացերը չի ծածկում, մեզ ատում ե բացարձակ».
Տգետներն են այդ ասում, լավ սիրտն ե լավ իմանում,—
Ատելու թյուրնն այդ ասված՝ խոր սեր ունի անպարփակ:

Հոկտեմբերի, 1864 թ.

Ղվարելի

ՂՎԱՐԵԼԻ ԼԵՌՆԵՐԻՆ *

Հարազատ լեռներ, ձեր դավակը ձեզ թողնում ե անա,
 Բայց վոչ մի վայրկյան, յես վոչ մի վայրկյան ձեզ չեմ մոռանա:
 Դուք իմ սրտի մեջ կըմնաք հավետ անմոռաց, անմեռ,
 Վեհապանծ լեռներ, բընության ձեռքով պսակված լեռներ:
 Մանուկ եյի յես, չեյի հասկանում դեռ չարն ու բարին,
 Սարսըռում եյի, նայելով հսկա ձեր կատարներին...
 Սարսըռում եյի... ո՛ր, չեր այդ անի ու սարսափի դող,
 Յես յերկչոտ չեյի, յես ան չուներ շանթից շառաչող.
 Նայում եյի յես ձեր կատարներին յերկնի ծոց մտած
 Ու դոչում, հրճվում պատանեկական հոգով թեաբաց:
 Այնտեղ, ուր ամպերն անգամ սարսափով եյին մոտենում,
 Ուր խուլ հողմերի սուլոցին եյիք դուք ականջ դընում,
 Ուր ճախրում եյին միայն կրուռնկներն անտես յերամով
 Ուր նըրանց անգամ անհաս եր թվում ձեր բարձունքը մով,
 Պատանեկական միամիտ հոգով ձգտում եյի յես
 Այնտեղ սավառնել, ճայթել անավոր ամպրոպների պես,
 Ձեփյուռը գրկել ու փարվել ազատ արծվի թևերին՝
 Հասնելու համար, լեռներ, վեհափառ ձեր կատարներին:
 Յերբ ձեր ձորերում վոռնում եյին խոլ հողմերը դաժան
 Վերսից վոռնացող հըզոր, անուելի առյուծի նըման,
 Դողում եյի յես վորպես մի տերև, հոգով սարսըռում,
 Մի բան կար ծանոթ, մի ձայն հարազատ՝ այդ աղմուկներում.
 Այս խոհերն այնժամ իմ ջահել հոգին չեյին փոթորկում,
 Այժմ հպարտ եմ, վոր ծնվել եմ յես ձեր անեղ գրկում,
 Իմ բարեկամներ, յես հպարտ եմ, վոր այստեղ ծնվեցի
 Շանթի, վորոտի, ամպրոպի գրկում—վորպես վըբացի,
 Վոր յերբ ծանրանում եր վիշտը հոգուն իմ պատանեկան
 Հեղեղում եյի ձեր գրկում՝ աղի արցունքներ այնքան,
 Ձեզ եյի դիմում, գանգատվում, թեկուզ դուք այն ժամանակ,

Ինչպես և այսօր, չեյիք ամոքում իմ վշտերն անհագ:
Բայց այդ վաղեմի անցած պահերի սովերները լուռ
Յես կպահպանեմ իմ սրտի խորքում մինչև շիրմի դուռ:
Սիրում եյի ձեզ, պատանեկության իմ բարեկամներ,
Իսկ այժմ կյանքի պահանջն ե դաժան՝ ձեզնից բաժանվել,
Այդ դառըն բաժակն ե առաջարկում ինձ կյանքն, ապագան,
Միթե կանր պատիժ այս բաժանումից ավելի դաժան:
Նժուլդիս ամեն մի քայլը ձեզնից հեռու յե տանում,
Ամեն մի վայրկյան ան ամօք վորբիս ձեզնից բաժանում,
Դուք հետզհետե կորչում եք հեռվում... դադաթները ձեր
Հազիվ եմ ջոկում... վայրկյան... և միայն տեսնում եմ գրծեր,
Անգոր եմ պատուել շերտերը ողի և տարածության,
Իզուր ե թախծոտ հայացքըս փնտռում կորցրած մի բան.
Ել չեն յերևում գազաթները ձեր ու պայծառ տեսքով
Ել չեն դարգարում չքնաղ չերկնքի կամարները մով:
Դե, մընաք բարձր, թողնում եմ յես ձեզ՝ արցունքն իմ աչքին,
Բայց հեռուններից յես ձեզ կըհառեմ աչքերըս կրկին,
Հողիս կըժպտա ձեզ այն աշխարհից իմ պանդխտության,
Սիրտըս կըզարկի ձեր սիրով լեցուն, ձեզնից անբաժան:

Ա Լ Ա Ձ Ա Ն*) Գ Ե Տ Ի Ն

Ջահելության ծաղիկն իմ՝
Թոռնեց կյանքի հոսանքից,
Յանկուրյունքս եվտղեց,
Ճնշված մի սիրս մնաց ինձ:

ՍԱԲԱ ՈՐԲԵԼՅԱՆԻ**)

Գեա իմ, հայրենի լեռան բյուրեղյա արցունքից կլտված,
Արդ, իմ բարեկամ, կանգնած եմ ավերդ ու նայում եմ ցած,
Անցյալը՝ վշտով վորոնում եմ յես քո այդ ջրբուռ,
Վոր ժամանակի հոսանքից քո մեջ թաղված ե, հանդչում...
Յեվ ինչ կա այստեղ, այն ե հիշեցնում, ինչ վոր կորցրեցի,
Յեվ վորի թախիծն իմ անմխիթար սրտում թաղեցի...
Ահա այն կաղնին, վորի շվաքում միասին նստած—
Յես ու նա, ով վոր ճանաչվեց վորպես իմ կյանքի աստված:
Մենք նայում եյինք. դու հուզված եյիր, հուզված, անհանգիստ,
Քո հուզմունքի պես՝ մեր յերկուսի մեջ հուզվում եր մի սիրտ,
Այնտեղից նայում այդ քո արեհուշդ հորդ-ալիքներին,
Սակայն նրանց մեջ մենք չեյինք անում ընտրությունն ինքնին:
Ինչներինս եր պետք հապա մեզ գալիք, յերբ ներկան եր լույս,
Նազիկ ու գողարիկ, վորպես անսպալ բացվող արշալույս
Սակայն շուտ անցավ մեր սրտի փոքրիկ հանգիստն անաղետ,
Հիացած սիրո կուրությունն այսպես չքացավ անհետ...
Ամեն ինչ կորցրի, խույս տվեց ինձնից բախտն ել ժպտացող,
Յեվ գնաց, վորպես այն ժամանակվա արիքըդ անցնող...
Դու ել ես փոխվել, ո՞վ իմ Ալաղան, կաղնին չորացել,
Յեվ անժամանակ յես ել ճերմակած՝ ասես ծերացել...
Ո՞ւր ես գընացել ապրումները մեր, ըզգացմունքն ու սեր,
Ել չկան. հապա ինչո՞ւ յեն մնում մեր հուշերը սեվ:

1859 թ.

*) Գետ՝ Կախեթում:

***) Վրացի գրագ 8—1725(165)

A II
32097

**

Ո՛վ գեղեցիկ իմ աշխարհ, ասան, ինչո՞ւ յես տխրել...
Այսօր ներկան չի ժպտում, բայց ապագան մերն ե, մեր,
Հներն անա հեռացան, բայց նորերը քոնն են դեռ...
Վերականգնեն թող նրանք քեզ մեծության վառ որեր,
Ո՛վ իմ պայծառ աչքի լույս, ասան, ինչո՞ւ յես տխրել:

2069
Ձավակներդ մեծացան, դարձան արդեն հաղթ ու վես,
Նրանց հոգսի առարկան դու յես յիվ դու կլինես,
Ձեն դավադրի քեզ յերբեք, թե դու նրանց վստահես:
Նրանց գործով կըփայլի դեմքդ բախտից լուսերես,
Ո՛վ իմ պայծառ աչքի լույս, ասան, ինչո՞ւ յես տխրել:

Նրանց սիրտը քեզ համար ապրելու բնույն ե փարթամ,
Նրանց վանդակը սրտի՝ քո պատահին ե անվթար...
Ձի պղծելու իղձըդ վեհ յիվ վոչ մի ձեռք անարդար.
Նրանք՝ կըծքով կփշրեն վոստխների բերդը քար,
Ո՛վ գեղեցիկ իմ աշխարհ, ել ինչո՞ւ յես դու տխրել...

16 սեպտեմբերի, 1872 թ.



Ե Լ Ե Գ Ի Ա*)

Լուսինն աղոտ լույս է փռում
Իմ աշխարհին մայրենի,
Կուլ է գնում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռներին:

Ձայն չի գալիս վոչ մի կողմից,
Վրաստանը՝ մութն ու լուռ.
Վրացին է հաղթված քնից,
Տնքում տանջված ու տխուր:

Մենակ եմ լես: Քընած է նա,
Քընած շուրջըս ու հեռու...
Ա՛խ, աստված իմ, քընա՛ծ, քընա՛ծ,
Յե՛րբ է արդյոք դարթնելու...

1997 թ.

*) Թարգմ. Հայկ. Թումանյան

Գ Ա Ր Ո Ւ Ն*)

Կանաչ ե նորից,
Ծիծառը յերգում,
Վազը հրճվանքից
Լալիս ե այգում:

Հովիտ ու լերինք
Ծաղկել են պես պես՝—
Իսկ դու, հայրենիք,
Յերբ պիտի ծաղկես...

1907 թ.

*) Քարզմ. Հովհ. Թախանյան

Մ Ա Ճ Կ Ա Լ

«Գուրբան իմ, անցիւր-յես դարձիք,
Ղիրդիտա*»), նրան ձայնակցիր»:

Բախտակիցներ ենք, Լարա**), յես ու դու,
Մեզ բաժին ընկավ սեզ հողը տրտում.
Դե՛հ, սրտով քաշենք ծանր լուծը մեր
Ու դեռ ճաշակենք անուրախ որեր.
Շարենք շարիշար՝ ակոսն-ակոսին,
Վաստակի քրտո՛նքն անձրեզներ հողին:
Յեզ մի՛ վշտանա... լուծըդ հողնարեկ,
Դժվար չե, Լարա, իմ լուծից յերբեք,
Յես ել քեզ նման նայում եմ հողին,
Յերկնից վախ ունեմ այսոր ել կրկին...
Հողն, ինչպես զոհին, ինձ ել քեզ նման
Կըկորցնի մի որ՝ անհետ, անգյո. ման:
Բանական եմ յես, իսկ դու անասուն,
Ինձ մի նախանձի, լեղիբ դու հանդարտ,
Յես թուրն ի՛նչ անեմ, թեկուզ յեզ շատ սուր,
Յեթե բուժ ե նա գործի մեջ արդար:
Ի՞նչ ոգուտ կըտա այն գութանը մեզ,
Թե ակոսը խոր չի գծի հողում,
Հիմքից չի կտրի ամեն խոտ ու սեզ,
Վոր սերմին ազատ ծլել չեն թողնում:
Յեզ իմ վիշտը մեծ, կյանքը վախնաշար
Ու իմ մարդկային ապրումը տրտում—
Խոսքեր են ծնում, խոսքեր անդադար,
Բայց մեռնում են լուռ նորից իմ սրտում:
Դու չես հասկանա տանջանքը մարդու,
Յերբ արդար խոսքը խեղդվում ե սրտում...
Հավատա, Լարա, լուծըդ հողնարեկ

*) Ղիրդիտա—գութանի մասն է, փոքր անիվը:

***) Լարա—յեզան անուն է:

Դժվար չե այստեղ իմ լուծից յերբեք:
Ել ինչ ես տխրում... դեհ, քաշիր անխոնջ,
Գո, թանը հասցնենք ծայրին անվթար,
Մի դավաճանի քո հին ընկերոջ,
Կյա՛նք տուր նրան դու, վոր նա քեզ կյանք տա...

4 հունիսի, 1858 թ. Պետերբուրգ
(Վերջին խմբագրութունը՝ 1863 թ.)

Մ Շ Ա Կ

„В труде проходит жизнь его
и не приносит ничего»

1

Ամռան որերին՝ յես անց եմ կացել Շուա-բազարով*),
Յեզ քեզ, ո՞վ մշակ, տեսել եմ հաճախ տրտում ու խռով—
Պառկած պատի տակ. վրադ եր նայում արեվը կիզիչ,
Ու սիրտս եր դողում, յերբ հասնում եր ինձ մուրմունջըդ հողիչ
Վշտոտ ձայնիդ մեջ գրծվում եր միշտ ել կյանքըդ վայնաչար,
Դառնություն, տանջանք՝ մի պատառ ցամաք չոր հացի համար:
Ո՞վ ես, իմ անգին, սիրելի յեղբայր, ասա, վճրտեղից,
Բատոնու**) ձեռին դու չե՞ս դիմացել, փախել ես դուղից,
Անջատվել ես դու քո ընտանիքից յեվ տուն ու տեղից,
Քո պապենական դաշտերից սովոր, ջրից ու հողից,
Թե՞ քեզ՝ ակամա հարված հասցրեց բախտը փունճ ուսին,
Կամ մոլորվեցիր հենց ուրիշ մարդկանց հույսից խաբուսիկ:
Այդ ո՞ւր ես յեկել... ինչ վոր կորցրելիք յեվ թողիք անդարձ,
Դրա փոխարեն դու Թբիլիսում, ասա, ի՞նչ գտար...

2

Ահա, բեռան տակ կքել ես դու խիստ, իմ դժբախտ մշակ,
Քրտինքը գուլալ՝ թափվում ե այդ քո արդար ճակատից,
Հսվում ե հեռվից քո խեղդվող շնչի հեվքը շարունակ—
Գնում ես, ո՞վ խեղճ, ծունկդ ե ծալծրվում մեծ բեռան ուժից...
Ո՞վ կըխողճա քեզ... ահա վազում ե կառքը մեծ մարդու,
Յեզ նա քո հանդեպ խեղճ չունի յերբեք, գալիս ե լարված,—

*) Շուա-բազարի—հնում Թբիլիսիի թաղերից մեկն էր:

**) Բատոնի—ճորտատեր, պարոն, տեր:

Ու հասնելուն պէս՝ ընդհարվեց նա քեզ, յեմ ինչպես մի կուժ,
 Զարդելու համար քեզ չը խնայեց, յեմ ընկար դու ցած...
 Դու կողքի ընկար քո ծանրը բեռով, յեմ ամբոխն անցնող
 Դեպքին անտարբեր՝ ծիծաղեց վրադ, հրհուաց յերկար...
 Այն, ինչ ըզգացիր, ասացին միայն աչքերըդ վառվող,
 Քո լուռթյան մեջ աստրծու ցասում ու բարկություն կար:
 Յեմ նույն լուռթյամբ մտտեցար բռնիդ ու քաշքշեցիր,
 Յեմ յերակնները կապտեցին դեմքիդ, ասես պիտ պայթեն,
 Չես կարողանում ու զրկվում ես դու քո որվա հացից...
 Ամբոխն է նայում, չի մեկնում վոչ վոք քեզ ոգնության ձեռք...

3

Ահա հասար դու ու բերդ հասցրիր այնտեղ՝ քո տիրոջ,
 Մաղարի*) փեշով սրբեցիր ճակտիդ տաք քրտինքը վողջ.
 Հպարտ ե քայլում մեծատունն անհող՝ մեղմիկ շվափում,
 Մնում ես նրան, — քո պատահն ե լրկ այն մարդու ձեռքում...
 Յեմ հաճախ՝ նույնիսկ այդ պատառը նա չի ուզում քեզ տար,
 Ու քեզ՝ սովյալիդ, մերկ ու տկլորիդ՝ պահաս վարձ կրտա...
 «Հացս մի կտրի, — ասում ես նրան, — աստրծուն նայիր,
 Այդ պատառը յես՝ կհնդանու նման բռնով ձեռք բերի»:
 Յեմ անդոր ես դու... Անդորի վրա մարդն է բռնանում,
 Ու նա հարստին շատ կտա, իսկ քեզ՝ կոպեկ չի տալու,
 Ով կարիք չունի, շատ կտա նրան, քո վարձն է կտրում,
 Մինչ՝ գըռոշն**) անգամ՝ մի որ ել ավել կյանքդ ե յերկարում:
 Հարուստից՝ զրկված ու անխրավված հեռանում ես դու,
 Յեմ յերբ մթնում ե, գլխիդ տակ դնում փալանըդ մաշված,
 Քարերի վրա ընկնում ես մի տեղ, այն հուշսով տրտում,
 Վոր վաղն ել այդպես կը շարունակես գործըդ անարգված:

4

Ու քո որերն ես այդպես մթնեցնում այդ աշխատանքում,
 Յեմ մարդու նման չես կարող մի որ ապրել քո կյանքում...
 Հետո, ո՛վ գիտի, թե վո՞ր խրճիթում, կամ վո՞ր նկուղում
 Պայքար կը մղես անեղ մահվան դեմ քո հոգեվարքում:

*) Մաղարա—վերնաշոր:

**) Գըռոշ—կես կոպեկ:

Մենակ ես պառկում, յեվ ներքնակի տեղ լուկ հարդն ե տակիր,
Իսկ վորպես վերմակ, թե վոր լինում ե, մազարադ կրկին:
Յեվ մե՛նակ կապրես, մենակ ել, յեղբա՛յր, կմեռնես մի որ,
Կինըդ չի կարող թափել քեզ վրա արցունքն իր այրող:
Լաց չեն լինելու քեզ վրա խղճուկ վորդիները քո,
Յեվ մահվան ժամին իդո՛ւր կըկանչես նրանց դու ձեռքով:
Կը մեռնես այդպես. քեզ անմիջապես կըդնեն դադադ.
Առանց արցունքի կիջեցնեն, յեղբա՛յր, գերեզմանը պաղ,
Յեվ անմեղ ու զուր դու կըկործանվիս, յեվ հուշերը մեր՝
Բնավ չեն սսի, վոր դու յերբեվի «այստեղ» յեղել ես:

12 հուլիսի, 1860 թ.

Պավլովսկի

*
* *

Մենա՛կ եմ լողում յես կյանքի ծովում,
Յե՛վ ասես անկամ, անմիտ ու անլույս.
Ալեհույզ ծովում, հողմերում անդու՛լ
Զի ժպտում վոչինչ, վորպես սրտիս հույս:

Ալիքներն անդուսպ դեպ ինձ են գալի,
Վրա յեն թափվում իմ փոքրիկ նավի,
Ու հողմերի դեմ նավըս չերերուն,
Նայում եմ՝ մեզնից ո՞վ է հաղթելու:

Որորում են ինձ ջրերն ամենի,
Նաղացնում, ինչպես մի անփորձ գոհի,
Գիտեմ, յերբ ուզի ծովն իմ դեմ թնդալ,
Կըթաղի նա ինձ սառը ջրի տակ:

Յե՛վ իմ աննշան հետքը նա շուտով
Կըծածկի խորունկ ջրերում իր մով...
Թե այսպես կորչեմ, դու յերբեք մի լա,
Այդ արցունքներին արժան չեմ բնավ...

5 նոյեմբերի, 1858 թ.

Պետերբուրգ



Աղջիկ եր նստած մի անգամ կողքիս,
Իր գեղգեղանքով ասում եր նա ինձ.
— «Ո՛վ յերիտասարդ՝ ինչո՞ւ յես տրտում,
Յերբ արեվն այսպես պայծառ ե ժպտում.
Նայիր դու նրան, ինչպե՞ս անձկագին
Իր շողքն ե նետում նա վողջ աշխարհին»:
— «Ի՞նչ նայեմ նրան, գիտեմ, վոր յերբեք
Կենսալից նրա շողքից յեվ վնչ մեկ
Ձի կարող սիրտըս շոյել, տաքացնել,
Վնչ ել վիշտըս մեծ՝ լոկ արցունք դարձնել»:

26 հոկտեմբերի, 1858 թ.

Պետերբուրգ

Ք Ռ Ի Ա Փ Ի Ն

Լ. Մաղալաւովիւն*)

Նորից իմ առաջ քուռն եւ աղմըկում,
Այդ աղմուկի մեջ՝ յերկրիս վիշտը կա,
Նորից իմ հողին նույն թախծով անքուն,
Հեծո՛ւմ եւ պղտոր ջրի հետն ահա:

Նորից դարթնեցին մտքերըս բոլոր,
Բացվեցին ահա իմ վերքերը հին...
Գանգատ եմ անում ջրերին մոլոր,
Մեր անցյալն ասես նրանք կուլ տվին:

Կըջնջվես յեվ դու, ժամանակ տխուր,
Փոշի կըդարձնեն քեզ դարերն անթիվ...
Խընդիրըս լսիր, լսիր, ո՛վ իմ Բուռ,
Յեվ թախիծս այնժամ նրանց հաղորդիր:

հոկտեմբերի, (1861 թ.)

Քրիվսի

*) Իլիա Ճալալաւաձեյի մտերիմը՝ նրա ուսանողութեան ժամանակից:

Յ Ե Ր Գ

Ո՛ւր ես տանում ինձ քեզ հետ,
 Տխուր կյանքի տխուր գետ,
 Ի՛նչ ես իմ նավն որորում,
 Կյանքի ավիք դու հավետ:
 Ինչ կըբերի,—հավ գիտի
 Միտքը հոսող այս գետի.
 Ներկան լավ բան չի ասում,
 Անցյալն ել այդ լավ գիտի
 Յեվ տարագիր ասողի պես,
 Վոր լինում և միշտ անտես,
 Նավըս այդ հւր, հավ գիտ գետ,
 Վհր ծովում պիտ խորտակես.—
 Կըջնջի քո ջուրն անգութ
 Շուտով հետքըս անողուտ...
 Թե ինձ սա չեր վիճակված,
 Կյա՛նք իմ, յեղիբ անիծված:
 Աշխարհ ինչո՞ւ յես յեկա,
 Թե չեր ժպտա ինձ ներկան...
 Ում բախտն այսպես և լինում,
 Ամենքից ել խեղճ ե նա...
 Մենք՝ յերկու վորբ լողվորիկ,
 Յես ու նավն իմ այս փոքրիկ.
 Ո՛ր, խնդրում եմ, անգուսպ գետ,
 Մովում չանես մեզ անհետ:

4 հունիսի, 1858 թ.

Գևորգյան

* *
*

Տեսա սիրունուս, արցունք եր թափում,
Իր բախտն եր լալիս ու սերը թափուր.
Արցունքը թռչնած վարդից եր թափվում,
Լալիս եյի յես կարտուով հեռվում:

Յեկավ ուրիշ որ, նա առանց վշտի՝
Իր ձեռքին ուներ գեղեցիկ վարդ մի,
Այդ վարդին՝ նա նոր սիրով եր ժպտում,
Իմ աչքում՝ նորից արցունքն եր արտում:

26 հոկտեմբերի, 1858 թ.

Պետերբուրգ

Մ Ի Շ Տ Ս Ի Ր Ի Ր

Ո՛վ մարդ, միշտ սիրելի,—
Ձայն ավին յերկնից,
Յերբ ծնեցին ինձ:
Այս խոսքը հավիտ,
Վոնց ճրագն ինձ հետ,
Յերկրում ընթացքիս
Վառ լո՛ւյս եր տալիս:
Յեղբայր, ինձ լսիր,
Դո՛ւ ել միշտ սիրելի...

23 հունիսի, 1858 թ.

Տիարշեվս

Խ Ի Ն Դ

(Ձ ՈՆ)

Խինդը նման է ճամբի մոտ բուսած,
Անցնելիս պոկած ծաղիկն հոտավետ,
Այն, վոր ձեռքիդ մեջ յերկար չպահած՝
Թողում է մի պահ ու թռչնում հավետ:

7 մարտի, 1859 թ.

Գ Ի Շ Ե Ր

Յերբ վոր աշխարհի ժխորը բաղում՝ առնում և դադար,
Յեվ ել չեն լավում չարութեան ձայներ, ձայնե՛ր ձանձրալի,
Նիրհած աշխարհին յերբ յերկնի կամարն իջնում և հանդարտ,—
Հարավի գիշեր, դու այն ժամանակ դյուլթանքո՛վ ես լի:

(1857—1861)

Բ Ա Ջ Ա Լ Ե Յ Ի Լ Ի Ճ Ը *)

Բաղալեթի լճի տակ
 Կա որորոց վոսկեկերտ,
 Նրա շուրջը՝ ջրի տակ՝
 Անհայտ այգի՝ ծաղկավետ:

Կանաչ է միշտ այդ այգին,
 Ու այն լերբեք չի թռչնում,
 Ժամանակի պտուկտից՝
 Հմայքը չի կորցընում:

Յե՛վ կանաչը չի խամրում
 Ձմռան ցրտից, կամ՝ շոգից,
 Արե՛վ կա միշտ այն վայրում,
 Գարնան է հար ծաղկալից:

Անհատ այգու հենց մեջտեղ՝
 Այդ որորոցն է դրված.
 Ու մարդկանցից յե՛վ վրչ մեկ
 Դեռ չի իջել այնտեղ—ցած:

Ծովահարսերը բոլոր՝
 Լուռ գգվելով մեկ-մեկու,
 Որորոցի շուրջ-բոլոր՝
 Հավաքվում են ու յերգում...

*) Բաղալեթի լճը գտնվում է Դուշեթի մոտ:

Այնտեղ թամար թագուհին *)
Այդ որորոցն է գրել,
Վրան ծածկոց՝ աղզը իր
Արցունքի լիճն է փռել:

Ու չեն ասում՝ նրա մեջ
Ո՞վ է այդպես մրափել:
Յեւ ազգն արցունքն իր անշեջ՝
Վրան ինչու չէ թափել...

Որորոցում գուցե կա
Մի անանուն շնորհածին,
Վորին միշտ ել կցանկա
Լուռ կարոտով վըրացին:

Թե այդպես է, փնռք նրան—
Տղամարդուն անվանի,
Ո՞վ առաջինն այդ մանկան
Իր խընամբը կտանի:

Թե այդպես է, փնռք նրան—
Մորն անվանի, հոգատար,
Ո՞վ առաջինն այդ մանկան
Գորովալից ծիծ կառ:

հուլիսի, 1883 թ.

*) Վրաստանի թամար թագուհին (1189—1212):

* * *

Կյանքը ճնշող ու խեղդիչ—
Յերկնից շնորհված մի կարծիք,
Նա ծնվել է հենց յերկրից,
Վերջ կունենա, իմացիք:

Կյանք է դարձնում աստղալից՝
Ապրող հողին ամեն ինչ.
Նա հավերժ է յեվ անմահ,
Վորպես հողու արարիչ:

Յերնեկ, ով իր լավ գործով
Կընշի կյանքն իր անբիծ,
Նա այտեղ իսկ կըխմի՝
Անմահության աղբյուրից...

1860 թ.

Պետերբուրգ

ՅԵ՛Կ, ՀԱՇԻՎ ՏԵՍՆԵՆՔ

Ե՛հ, իմ անգուլթ բախտ, կյանքիս մեջ անլույս՝
Քո կամքին եմ միշտ յեղել յենթակա,
Մեռցըրել իմ մեջ ամեն իղձ ու հույս՝
Քաղցըր ցնորքի հետեւից ընկած:
Իմ աչքին՝ կիզիչ արցունքներ արյան,
Սիրտըս վիրավոր՝ հեռքերը վրան:
Հերիք ե արդեն... յեկ, հաշիվ տեսնենք,
Ի՛նչ ե, ինձանից դու թաք ես կացել...
Ժամանակ ե, վոր մեր դերը փոխենք,
Քո իրավունքի որերն են անցել...
Նվազիդ ներքո յես պար եմ յեկել,
Նեղն ես գցել ինձ շատ ու շատ անգամ,
Իմ ձեռքին ահա սրինգ կա արդեն,
Յես կընվագեմ, իսկ դու՝ պար կզատ:

19 հունվարի, 1859 թ.

Պետերբուրգ

* * *

Չայն եմ լսում յես ցանկալի—
Շղթայագերձ ազատության,
Արդարության ճաշնն ե գալի,
Վերջ կեղծիքին, ըստրկության:
Յե՛վ այդ ձայնով տարվում եմ յես.
Նա իմ սրտում հույս ե վառում:
Աստվանձ, աստվանձ, այդ ձայնը զես՝
Լսել տուր ինձ իմ աշխարհում:

29 հուլիսի, 1860 թ.

Պավլովսկի

1871 թիվ, 23 ՄԱՅԻՍԻ

(Կոմունայի անկման ուրբ)

Ճնշված մարդկանց ազատարար
Դրոշը վեհ՝ ողուժ բացվեց...
Նորից յերկրի ուժն անարդար
Գետին զարկեց դրոշը մեծ:

Նորից տանջվեց հերոսաբար՝
Ժողովուրդը վեհ ու անգին,
Նորից դրավ պսակը վառ,
Պսակը մեծ չարչարանքի:

Նորից թափվեց յերկրի համար՝
Արյունն արդար նահատակի,
Նորից պարտվեց գործը համայն,
Սիրո փրկիչ գործն ամենքի:

Նորից ճնշվեց յերկրին ուղղված —
Կյանքը փրկող պատգամը մեծ,
Վերի համար ինքը՝ աստվածն՝
Այդպես խաչվեց ու չարչարվեց:

Նորից առավ կյանքը դադար,
Վերածննդն ու ժերն ընկան.
Արդ տոնում են տոն անարդար՝
Դահլիճները հաղթանակած:

ՎՐԱՑՈՒ ՄՈՐԸ

Նեքիան ծնվելով անցյալից,
Ինքի՛ ծնողն է գալիքի:

ԼՅՅԲՆԻՑ*)

Ո՛վ մայր վըրացու, թող սիրաբղ բերկրի,
Տվել ես հնոււմ վորդուդ քո յերկրին,
Մեր որորի հետ մրմունջը սարի՛
Կոփում եր գալիք մի հերոս արի...
Այն ժամն ել հանգավ... Ու թախիծը մեծ—
Բախտը գերության լծի տակ անվիրջ—
Կյանքն ու խինդն իսպառ ավերեց քո մեջ,
Վորդուդ ել անա ստվերի փոխեց:
Ել սւր են, ասա, այն պապենական
Սուր, ուժն ու կորով, յեվ կուռն առնական,
Յեվ անվան համար մեծ ձիւրք ու քանքար,
Բիրտ թշնամու դեմ հաղթական պայքար:
Ել մենք չըվորքանք այն, ինչ վոր անցավ,
Ինչ վոր մի անգամ ուժով վերացավ.
Մեռցընենք մեր մեջ թախիծն անցյալի...
Յեվ նոր աստղի տակ դարբնենք մեր վողին,
Կերտենք մեր ձեռքով նորը պանծալի
Ու տանք նորոգ կյանք մեր ժողովրդին...
Այստեղ է, ս՛վ մայր, մեծությունը քո,
Կոչումըդ վսեմ ու պարտքն աստծո:
Աճեցրու վորդուդ, ուժ տուր իր հողուն,
Քրիստոսի պատգամ՝ քեզ վորպես սնունդ,

*, Լեյբնից—հայանի գերմանացի փիլիսոփա (1646—1716 թ.)

Ներշնչիր նրան միշտ ազատութիւն,
Վոր սիրի ընկեր, միութիւն, սերունդ.
Ու մահվան հանդեպ՝ ցնծա սիրտն իր վառ,
Հանուն գալիքի մղի մեծ պայքար...
Հավատն, տունին այդ կրծադէլի քեզնով
Ու կտա վայել պտուղներ մեզ նոր:
Ո՛վ դու մայր, լսիր ձայնը վըրացու,
Ձավակիդ հոգին այնպէս ամբաստու,
Վոր բռնի ուղին մեծ ճշմարտութեան
Յեւ թողնի հետքը՝ լույս ու գիտութեան:

15 դեկտեմբերի, 1858 թ.

Պետերբուրգ

Ն Ա Ն Ա*)

Բալիկ, քնիր դու անլաց,
Արդյոք ինչի՞ց վախեցար,
Դու ցնցվեցիր ու նորից
Աչքըդ դարձրիր ահով ինձ.
Յեվ այդ մատաղ բախտը քո,
Կյանքըդ այդպես միշտ աճող՝
Դեռ չի գծել աչքիդ դեմ
Յերկրիդ պարտքը հազվադեպ...
Հասկա ինչի՞ց վախեցար,
Բալիկ, քնիր դու անլաց:

Քանի վոր դու մանուկ ես,
Քանի դեռ չես ժամանակ,
Աշխատիր, վոր լավ քնես,
Քուներդ՝ յերազ մի հատակ.
Կըմեծանաս որեցոր,
Բազուկներըդ կամբանան,
Մանկան յերազը անզոր՝
Մի որ պայքար կդառնա:
Չվախենան դու այն որ,
Քնիր, բալիկ իմ, որո՞ր:

Կըտեսնես մեր բախտը սեվ,
Հին միությունը կորցրած—
Քաջությունն ու խինդը վես,—
Հայրենիքն ե վորբացած...

*) Նանա—նանիկ, որորոցի յերգ:

Սիրաբըզ վառիւր կրակով,—
Վոստիսի դեմ՝ դու կայծակ,
Կամ քո ազնիւ, վառ սրտով՝
Դարձիր յերկրիդ նահատակ:
 Զվախենանս դու այն ուր,
 Քնիր, բալիկ իմ, որճր:

Մայրն իր սիրաբըզ կըպնդի
Յերկրի համար—անխնամ,
Ինչքնս և պեաք մի վորդի,
Թե նրան զոն չը դառնա:
Ով իր վորդուն չի զոհել
Հայրենիքի կարիքին,
Այդ մայրը սեր չի տածել
Յերբեք, դեպի իր վորդին:
 Համաձայն չեմ նրան յես,
 Քնիր, բալիկ լուսերես:

Հայրենիքիս համար յես՝
Ծիծ եմ տալիս մայրական,
Ու կը զոհեմ նույնիսկ քեզ,
Վոր նըրան կյանքը ժպտա...
Նրան անուշ ծիծն իր մոր
Թույնի նման և հուզել,
Հայրենիքի համար ով
Իրեն զոհել չի ուզել...
 Զես լինի դու նրա պես,
 Քնիր, բալիկ լուսերես:

Այդ մահը լավ իմացիր,
Մահ չե, վորդիս, մահ բնավ,—
Հայրենիքին ով զոհվի՝
Նա միշտ անմահ կմնա:
Յերկրին տրված դու վերուստ,
Յեթե լինես զոն նրան,

Այն պահ կասի մայրն անշուշտ՝
Մարդը մարդնու պես մեռավ:
Այսպէս կասեմ յես այն որ,
Քնիք, բալիկ իմ, որձր:

Մահվան ժամին դու յերկրիդ,
Բալիկ, սիրով կը ժպտաս,
Նրա արյունը անբիժ՝
Հերոսաբար հետ կտաս:
Կը պսակվես ծիծաղով,
Թե քո յերկրին վոսոխ չես,
Յեւ հաղթական քո մահով
Նրա լացը կը սրբես:
Կուրախանաս դու այն որ,
Քնիք, բալիկ իմ, որձր:

Յեթե այդպէս կը մեռնես,
Կարիք չկա քեզ արձան,
Միշտ ել անմահ կլինես,
Վոնց արցունքն իմ սրբազան,
Հավատարիմ որորիս —
Այս և խորհուրդըս բարի.
Ինչ վոր խոսքով քեզ ասի,
Դու այն գործով կատարի:
Ո՛րոր, յերկրիդ զո՛ն դարձի,
Փոքրիկ, փոքրիկ վրացի:

13 ապրիլի, 1859 թ.

Պետերբուրգ

1

Որեհնքն եմ յես փողով չափել,
 Գոռչի խաթեր՝ մարդ եմ ծախել,
 Փոս եմ փորել յեղբոր համար
 Ու մեծացրել գրպանըս հար,
 Ռամկից խլել պաշար ու հաց
 Յեղ թողել եմ նրան սոված:
 Այդպես սոված թե վոր մեռներ,
 Չեյի խղճա նրան յերբեք:
 Խեղճն ի՞նչ ուներ իր ձեռքի տակ՝
 Տալիս եր իմ գրպանին հարկ,
 Լցրի՛, Լցրի՛ գրպանըս մեծ,
 Սակայն մեռա ու չլցվեց:

2

Վորբի լացին ու խնդրանքին
 Յես չեմ նայել, չեմ ըզգացվել,
 Չե՛մ ունեցել գուժ մարդկային,
 Էացը նրանց՝ խինդ եմ կարծել:
 Վորդիքն՝ այրի գեղջուկ կանանց
 Մեռնում եյին սով ու քաղցից.
 Գործի համար ինձ մոտ յեկած՝
 Փող եմ պոկել յես նրանցից:
 Տեսնում եյի մարդ խեղդվելիս,
 Կարող եյի նրան փրկել—
 Թե արծաթի ձայնն եր գալիս,
 Հեշտ եր գործին հենց ձեռնարկել:

3

Թե վոր չտար, յես հրելով՝
 Խեղդում եյի ջրերում ծով.
 Ու գործերն այս հերոսական՝
 Կատարել եմ յես աննման:
 Կյանքին ծանոթ շատ մոտիկից՝

Ոգուտ ե միշտ մովել նա ինձ,
Տեղը յեկած՝ կույր եմ դարձել,
Տեղն ել՝ աչքըս բացել հանգիստ,
Մերթ վառվել եմ ու փոթորկվել,
Մերթ ել պահել ինձ սառնասիրտ:

4

Գեղջուկի մոտ յեղել եմ վես,
Պետերի մոտ յես մի հիմար,
Անբանի մոտ՝ բլբուլի պես,
Խոսողի մոտ՝ յես մի անբան:
Ով վոր վախով կընայեր ինձ,
Սպառնում եյի աքացիյով,
Ով կըզոռար, նրա վախից
Անցնում եյի վոտի տակով:
Աստված տվեց մի ձեռ ճարպիկ,
Վոր չեր հոգնում իրեն որում,
Լցնում եր նա փողերն անթիվ
Գրպանըս մեծ յիվ որորուն:

5

Փորձով նրան տալով հաշիվ՝
Քերթել եմ յես մարդկանց կաշին,
Լցրի, Լցրի՛ զրպանըս մեծ,
Սակայն մեռա ու չլցվեց...
Ել ինչ ասեմ, յեղել եմ լավ,
Յերկրի համար յես ոգտակար:
Վոչ փոքր եյի, վոչ ել ավագ,
Կյանքումս արի սին պատարագ.
Գեղջուկ չեյի յիվ վոչ ել բեգ.
Բա ի՞նչ եյի. մի դիվանաբե՞գ*):
Հիմի կայծակ՝ գեղջուկներին,
Ծառա դարձած յես փողերին՝
Փոշիացա՛ գերեզմանում,

*) Դիվանաբեգ—ցարական պաշտոնյա, չինովնիկ, դիվանապետ:

Հավատ չկ' սին աշխարհում:
Ողջացե՛ք իմ մարմնին անշառ...
Թե յերբեվ տեսնե՛ք՝ դալով,
Այն աշխարհում, թե կա կաշառ,
Ուրախացրե՛ք՝ ինձ ձայն տալով:

17 գեղեմեմբերի, 1857 թ:

Գետերբուրգ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վրաց նոր գրականության հիմնադիրը	5
2. Գոհա	10
3. Թեկուզ յեւ մեռնեմ	11
4. Նրանից հետո	12
5. Դու, սիրելիլի իմ գրիչ	13
6. Ղվարեղիլի լեռնհրին (Թարգմ. ն Ջարյան)	14
7. Այազան գետին	16
8. Ո՛վ գեղեցիկ իմ աշխարհ	17
9. Ելեզիա (Թարգմ. Հովհ. Թումանյան)	18
10. Գարուն (Թարգմ. Հովհ. Թումանյան)	19
11. Մահալ	20
12. Մշակ	22
13. Մենակ եմ լողում	25
14. Աղջիկ եր նստած	26
15. Գոի ափին	27
16. Յերգ	28
17. Տեսա սիրունուս	29
18. Աղոթք	30
19. Միշտ սիրելը	31
20. Խի՛ղ	32
21. Գիշեր	33
22. Բազալեթի լիճը	34
23. Կյանքը ճնշող	36
24. Յեկ, հաշիվ տեսնենք	37
25. Ջայն եմ լսում	38
26. 1871 թիվ, 23 մայիսի	39
27. Վրացու մորը	40
28. Նանա	42
29. Ջայն՝ գրեղմանից	45

2565

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Այվազյան
 Դրավիտ լրագրող № Խ—9259
 Հրատ. 4229, պատվեր 226, տիրած 5000
 Հանձնված է արտագրության 1937 թ. սեպտ. 14-ին
 Ստորագրված է տպագրության 1937 թ. սեպտ. 29-ին

Գեահրատի 2-րդ տպարան, Նալբանդյան, 11



1940

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032097

204

1

А $\frac{II}{32097}$

И

И. Чавчавадзе

Стихотворения

Госиздат, Ереван, 1937 г.